Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

1826 օգոստոս 18 Հրդեհի զոհ գնաց Կ. Պոլսի Գում-գափու թաղամասում գտնվող հայոց մայր եկեղեցին, ոչնչացան նաև շատ արժեքավոր ձեռագրեր ու փաստաթղթեր:

սեպտեմբեր 3 Շամխորի ճակատամարտում ռուսական բանակը հաղթանակ է տանում պարսիկների դեմ՝ գեներալ Վ. Գ. Մադաթովի հրամանատարությամբ:

սեպտեմբեր 10 Ավարտվեց Շուշվա բերդի (Արցախ) հերոսական պաշտպանությունը:

սեպտեմբեր 13 Գեներալ Պասկևիչի գլխավորած ռուսական 8 հազարանոց զորքը Ելիսավետպոլի մոտ ջախջախում է Աբաս Միրզայի 25 հազարանոց բանակը:

սեպտեմբեր 21 Միրաքի ճակատամարտում ռուսական զորքերը պարտության մատնեցին Երևանի սարդարի զորքերին:

սեպտեմբեր 21 Կ. Պոլսում ծնվեց հայ ականավոր ճարտարապետ, հասարակական գործիչ Նիկողայոս Պալյանը: (Վախճ. 1858թ.-ին):

1827 մարտ 28 Կովկասի կառավարչապետ և Կովկասյան հատուկ կորպուսի ընդհանուր հրամանատար է նշանակվում գեներալ Իվան Ֆեոդորովիչ Պասկևիչը:

մարտ 29 Թիֆլիսում կազմվում է հայկական առաջին կամավորական գումարտակը:

մարտ 30 Թիֆլիսում տեղի է ունենում հայ կամավորների զորահանդեսը:

ապրիլ 2 Սկսվում է ռուսական զորքի Երևանյան երրորդ արշավանքը:

ապրիլ 13 Ռուսական զորքերը գրավում են էջմիածինը:

ապրիլ 27 Երևանի բերդի պաշարումը ռուսական զորքի կողմից:

մայիս 15 Հ. Ալամդարյանը հայրենասիրական ճառ է արտասանում ռազմաճակատ մեկնողների առջև:

մայիս 17 Հայկական կամավորական առաջին գումարտակը Թիֆլիսից մեկնում է մարտադաշտ:

մայիս 24 Թիֆլիսում կազմակերպված հայկական կամավորական գնդի կանոնադրության հրապարակումը:

հունիս 26 Նախիջևանի գրավումը ռուսական զորքերի կողմից:

հուլիս 5 Ջևան-Բուլադի ճակատամարտը:

հուլիս 7 Ռուսական բանակը գրավում է Աբաս-Աբադ բերդը:

հուլիս 21 Կարագիադինում հանդիպում են Ա. Ս. Գրիբոյեդովը և Աբաս Միրզան, նպատակ ունենալով հաշտության բանակցություններ վարել:

օգոստոս 17 Օշականի ճակատամարտը:

սեպտեմբեր 20 Ռուսական զորքերը գրավում են Սարդարապատի բերդը:

սեպտեմբեր 24 Սկսվում է Երևանի բերդի պաշարումը:

հոկտեմբեր 1 Ռուսական զորքերը գրավում են Երևանի բերդը:

հոկտեմբեր 6 Ստեղծվում է Երևանի ժամանակավոր վարչություն:

հոկտեմբեր 13 Ռուսական զորքերը գրավում են Թավրիզը:

նոյեմբեր 7 Դեհխառականի հաշտության բանակցությունները (մինչև 1828 թ. հունվարի 2-ը):

դեկտեմբեր 1 Սուլթան Մահմուդ II-ը շուրջ 12 հազար հայ կաթոլիկներ է արտաքսում Կ. Պոլսից, որոնցից 4 հազարը ցրտից մեռնում են ճանապարհին, իսկ մնացածները անցնում Փոքր Ասիայի գավառները:

դեկտեմբեր 1 Շուշիի հայկական տպարանի հիմնադրումը:

դեկտեմբեր 10 Երևանի Սարդարի պալատում, ռուս սպաների ուժերով առաջին անգամ բեմադրվում է Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգությունը:

1828 փետրվար 10 Թուրքմենչայում կնքվում է հաշտության պայմանագիր Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, որի համաձայն Ռուսաստանին են միացվում Երևանի և Նախիջևանի խանություններն ու Օրդուբադի շրջանը:

փետրվար 26 Սկսվում է պարսկահայերի վերաբնակեցումը Արևելյան Հայաստան և Անդրկովկաս:

մարտ 21 Նիկոլայ I-ի հրամանագիրը Հայկական մարզ կազմակերպելու մասին: Մարզի վարչության պետ է նշանակվում գեներալ-մայոր Ա.

ապրիլ 14 Նիկոլայ I-ը պատերազմ է հայտարարում Թուրքիային:

ապրիլ 25 Սենատի հրամանով Ա. Ս. Գրիբոյեդովը նշանակվեց Ռուսաստանի լիազոր-մինիստր (դեսպան) Պարսկաստանում:

հունիս 14 Ռազմական գործողությունների սկիզբը ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ռազմաճակատում:

հունիս 23 Ռուսական բանակը գրավում է Կարսը:

հուլիս 23 Ռուսական զորքերը գրավում են Ախալքալաքը:

1828 օգոստոս 15 Ախալցխայի գրավումը ռուսական զորքերի կողմից:

օգոստոս 28 Ռուսական զորքերը գրավում են Բայազետը:

սեպտեմբեր 12 Ռուսական զորքերը և հայկական աշխարհազորը գրավում են Թոփրախ-կալեն և ազատագրում Ալաշկերտը:

սեպտեմբեր 12 Կ. Պոլսի Միջագյուղ թաղամասում ծնվեց բանաստեղծ, հասարակական-քաղաքական գործիչ Մկրտիչ Պեշիկթաշլյանը: (Վախճ. 1868 թ.-ին):

նոյեմբեր 7 Դեհխառականի հաշտության բանակցությունները:

1829 հունվար 30 Թեհրանում սպանվեց Պարսկաստանում ռուսական դեսպան Գրիբոյեդովը:

հունիս 27 Էրզրումի գրավումը ռուսական բանակի կողմից:

հուլիս 7 Բայբուրդի (Բաբերդի) գրավումը:

սեպտեմբեր 2 Ադրիանապոլսում

ստորագրվում է ռուս-թուրքական հաշտության պայմանագիր: Ռուսաստանին են միացվում Ախալքալաքը, Ախալցխան, Սև ծովի արևելյան ափը. Անապա ու Փոթի նավահանգիստները:

սեպտեմբեր 26 Դորպատի (այժմ Տարտու) համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի հետ Խ. Աբովյանը սկսում է վերելք դեպի Արարատի գագաթը:

հոկտեմբեր 13 Կեսարիայի կառավարիչ Քեոսե փաշան հարձակվում է Զեյթունի վրա, սակայն պարտվում և ետ է շպրտվում:

նոյեմբեր 2 Նոր Նախիջևան քաղաքում ծնվեց հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: (Վախճ. 1866թ.-ին)

դեկտեմբեր 29 Գեներալ Պասկևիչը կարգադրում է գաղտնի կոմիտե ստեղծել Թիֆլիսում, որը պետք է մշակեր հայ եկեղեցու կանոնադրությունը:

1830 հունվար 8 Սուլթան Մահմուդ II-ը Կ. Պոլսի կաթոլիկ հայերին ինքնուրույն համայնք ունենալու իրավունք է շնորհում:

հունվար 22 Լոնդոնի պայմանագրով ճանաչվում է Հունաստանի անկախությունը:

փետրվար 1 Գեներալ-մայոր Վ. Բեհբութովը Հայկական մարզի վարչության պետ (մինչև 1838թ.):

փետրվար 17 Ղրիմի Գոգենլո գյուղում ծնվեց բանաստեղծ Գևորգ Դոդոխյանը: (Վախճ. 1908թ.-ին):

օգոստոս 17 Թուրքիան ճանաչում է Սերբիայի անկախությունը:

հոկտեմբեր 17 Զմյուռնիայում ծնվեց հրապարակախոս, թարգմանիչ, վիպասան Մաթեոս Մամուրյանը: (Վախճ. 1892թ.-ին):

նոյեմբեր 8 Նոր Նախիջևան քաղաքում ծնվեց Ռաֆայել Պատկանյանը: (Վախճ. 1892 թ.-ին):

(Շարունակելի)

Լուրեր

Իրան

Իրանը՝ Վրաստանի տարածքային ամբողջականության օգտին

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Իրանը հանդես է գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման օգտին եւ խորը գոհունակություն է հայտնում աջարական հիմնախնդրի խաղաղ լուծման առթիվ: Ըստ «Արմենպրեսի»՝ այդ մասին ասված է Իրանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Համիդ Ռզզա Ասեֆիի հատուկ հայտարարության մեջ: Նա հույս է հայտնել, որ «Վրաստանում կայունության եւ խաղաղության ամրապնդումից հետո այդ երկիրը կընթանա զարգացման ու բարգավաճման ուղիով»: «Իրանի Իսլամական Հանրապետությունը պատրաստ է Թբիլիսիի հետ երկկողմ հարաբերությունների եւ կովկասյան տարածաշրջանի երկրների միջեւ համագործակցության շրջանակներում առավել լուրջ քայլեր ձեռնարկել այդ տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ամրապնդման ուղղությամբ»,- ընդգծված է Իրանի արտաքին գործերի նախարարության ներկայացուցչի հայտարարության մեջ:

Քննարկվել են հայ-իրանական հարցեր

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանն այսօր ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության նավթի եւ գազի նախարար Բիժան Նամդազ Զանգանեին: Զրուցակիցները քննարկել են երկու երկրներին առնչվող մի շարք հարցեր: Նախարար Օսկանյանը կարեւորել է Իրան-Հայաստան գազամուղի շինարարության վերաբերյալ պայմանագրի կնքումը: Հայաստանի ԱԳ նախարարի գնահատմամբ՝ այն կարեւոր է ինչպես երկու երկրների, այնպես էլ ամբողջ տարածաշրջանի համար: Իրանի նավթի եւ գազի նախարար Զանգանեի համոզմամբ՝ կնքված պայմանագիրը հանդիսանում է տարածաշրջանի երկրների բարեկամության ամրապնդման խորհրդանիշ: Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են նաեւ նավթի եւ գազի միջազգային շուկայի արդի վիճակը:

Իրանը Եւրոպա գազ կարտածի Հայաստանով

ԵՐԵՒԱՆ (ԵՐԿԻՐ) - Թուրքիան միակ պետությունը չէ, որով Իրանը մտադիր է գազ արտածել դեպի Եւրոպա,- հայտարարել է Իրանի գազի ազգային ընկերության նախագահը: Թուրքիան չորս ուղիներից մեկն է՝ Եւրոպա գազ արտածելու համար,- ասել է նա: «Ազատություն» ռադիոկայանը նշում է, որ, ամենայն հավանականությամբ, ընկերության նախագահը նկատի ունի Հայաստանը, որի հետ օրերս գազատարի շինարարության համաձայնագիր է ստորագրվել:

Հայաստան

Հայաստանի ռեգբիի հավաքականը 2007թ.-ին կմասնակցի Ֆրանսիայում կայանալիք ռեգբիի աշխարհի առաջնությանը

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի ռեգբիի հավաքականը կմասնակցի 2007թ.-ին Ֆրանսիայի Բովե քաղաքում կայանալիք ռեգբիի աշխարհի առաջնությանը:

Այս մասին այսօր հայտնեց ՀՀ ռեգբիի ֆեդերացիայի նախագահ Գագիկ Փանիկյանը ժուռնալիստների միությունում հրավիրած մամուլի ասուլիսում՝ նշելով, որ ներկայումս դրված է սպորտաձեւի մանկապատանեկան դպրոցի ստեղծման խնդիրը, ինչի համար անհրաժեշտ են խոշոր ֆինանսական միջոցներ:

Ս.Իվանով.«Հայ-ռուսական ռազմական համագործակցությունը դինամիկ եւ առաջընթաց զարգացում է ապրում»

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Հայաստան աշխատանքային այցիս ընթացքում բանակցություններ են լինելու իմ պաշտոնակից եւ ընկեր՝ ՀՀ պաշտպանության նախարար

Սերժ Սարգսյանի հետ: Մենք կքննարկենք պաշտպանության եւ անվտանգության ոլորտում համագործակցության հարցերի ամբողջ համալիրը»,- նշեց Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը՝ «Արմենիա» միջազգային օդանավակայանում լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ:

Օգոստոսին Երեւանում կանցկացվի Համահայկական կրթական առաջին համաժողովը

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ (թղթ. Մարիա Ասատրյան): Օգոստոսի 27-ից 29-ը Երեւանում կանցկացվի Համահայկական կրթական առաջին համաժողովը:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության Սփյուռքի հետ կապերի բաժնի տեղեկատվության համաձայն, հայտեր են ուղարկվել բոլոր այն երկրներ, ուր կա հայկական համայնք:

Մասնակցության ցանկություն է հայտնել Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա կաթողիկոսը, որը ողջունել է համաժողովի կազմակերպումը: Մասնակցության ինը հայտ է ստացվել Եգիպտոսից, Մոսկվայից եւ Մեծ Բրիտանիայից:

Համաժողովին մասնակցելու հայտերը կընդունվեն մինչեւ հունիսի 1-ը:

Արշիլ Գորկու մասունքները կբերվեն Հայաստան

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Մինչեւ տարեվերջ ԱՄՆ-ից Հայաստան կբերվեն արդի արվեստի մեծանուն դեմքերից մեկի՝ Արշիլ Գորկու (Ոստանիկ Ադոյան) մասունքները:

Ըստ «Արշիլ Գորկի» հիմնադրամի տնօրեն Բադալ Բաղալյանի՝ նկարչի ամենամեծ երազանքն է եղել «վերադառնալ տուն՝ ձուլվելու իր պաշտած հայրենի հողին», ինչն ի կատար ածելու եւ այդ նպատակով դրամական միջոցներ հայթայթելու համար հիմնադրամը ծրագրում է անցկացնել Գորկուն նվիրված միջոցառումների շարք, մասնավորապես՝ հեռուստամարաթոն, որը, «...պետք է հանրության բոլոր շերտերի կողմից ընդունելի լինի»: Հիմնադրամին օգնել ցանկացողները կարող են իրենց դրամական աջակցությունը հայտնել հետեւյալ հաշվեհամարով՝ UNIBANK 241002005759 :

Ինչ վերաբերում է աճյունի ամփոփման տեղին, Բ. Բաղալյանի կարծիքով՝ «եղեռնազոհ» նկարչի մասունքները պետք է հանգչեն Ծիծեռնակաբերդում: Սակայն այդ հարցը որոշելու է ՀՀ կառավարությունը: Հիմնադրամի նախագահի նպատակն է, որ «ամերիկյան հրեայի» համարում գտած նկարչին աշխարհը ճանաչի որպես «վանեցի հայի»: Նկարչի անունը յուրաքանչյուր հայի հարազատ դարձնելու նպատակով մայրաքաղաքի փողոցներում կփակցվեն նաեւ «Արշիլ Գորկի 100. Որքան Արշիլ Գորկիներ կորցրեց մարդկությունը 1915թ.» վերտառությամբ 2 000 ցուցապաստառներ:

Իսկ հուլիսի 21-ին՝ նկարչի ինքնասպանության օրը, ուխտագնացություն կկազմակերպվի նրա ծննդավայր՝ Վանի Խորգոմ գյուղ:

Ի դեպ, Արշիլ Գորկու նկարները ամենաթանկ վաճառվողներից են. անցյալ տարի նրա մի կտավը վաճառվել է 3,5 միլիոն դոլարով:

Հայոց Սփյուռք

ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ ԵՐԳԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՀՄԱՅՔԸ

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«Կատարելության հասած հանճարի գլուխգործոցը մեր վերացական մտքերի խելահեղ մարմնավորումն է: Ստվերներից ու լույսերից է կազմված այն ցավը, որ մեզ անհրաժեշտ է»:

Շառլ Ազնավուր

Շառլ Ազնավուրը 80 տարեկան է: Երբեմն թվում է՝ ժամանակը խաղ է անում մեզ հետ, երբեմն էլ մտածում ես, թե շատ ավելի պայմանական մի բան է դա: Ազնավուրի պարագայում հենց այդպես է, որովհետեւ ինքը կատարյալ արտիստ է՝ իրապես կոչված բեմական կյանքի համար:

Առաջին՝ 1944ևին «Ես հարբած եմ» երգից, ապա 1946ևին է. Պիաֆի հովանավորությամբ համերգային շրջագայությունից հետո սկսվեց ազնավուրյան բեմական կյանքի ընթացքը: Ինչպես բոլոր մեծերի, Շառլ Ազնավուրի համար էլ դյուրին չեղավ հարթել այդ ճանապարհը. «Իմ ճանապարհը հեշտ ու հանգիստ չի եղել: Շատ դառնություններ եմ ճաշակել՝ երեսիս փակված դռներ, հեգնանքով ու արհամարհանքով լի ժպիտներ, կատակի տակ քողարկված չարախոսություններ: Ես ճաշակել եմ բոլորը»:

Վաղուց արդեն արտիստը նվաճել է փառքի դափնիները, աշխարհի բոլոր հռչակավոր բեմահարթակները վայելել են ազնավուրյան երգի անկրկնելի հմայքը: Եվ այդ երգը երբեք անցողիկ ասուպի փայլ չունեցավ, այլ՝ մշտահմա, որովհետեւ խորապես մարդկային է, արվեստը՝ ճշմարիտ: Այդ երգը չի հնանում, որովհետեւ հանդիսականի հետ մշտապես նորոգվում է՝ ժամանակի հոլովույթներում գտնելով կյանքի ազնիվ զարկերակը: 80ևամյա երգիչն այսօր էլ բեմ է բարձրանում ավյունով լի, ներքին դրամատիզմով, արտիստիկ, հոգեւին գեղեցիկ: «Ես գրում եմ փոքրիկ թատերգեր, որոնք խաղում եմ բեմի վրա»: «Նրա համերգը մի ամբողջ ներկայացում է իր ձեւավորման ու բեմադրության յուրահատկություններով», ասել է Անրի Վերնոյը:

«Ֆրանսիական երգարվեստի վերջին հսկան, անվերջանալի ու անկրկնելի տաղանդի տեր երգիչ», այսպես են գրել ֆրանսիական թերթերը Ազնավուրի մասին:

Աշխարհը նվաճած երգիչը թերեւս այն եզակի հայն է, որ եվրոպական, ֆրանսիական քաղաքակրթությունը յուրացրած եւ ֆրանսիական երգարվեստի դրոշմով իրենը ստեղծած, այնուամենայնիվ, խորապես հավատարիմ է մնացել իր ազգային էությանը: Դժվար թե ուրիշ մեկը գտնվի, որ այդքան սիրելի ու մտերմորեն հարազատ լինի յուրաքանչյուր հայաստանցու՝ մտավորականից մինչեւ գյուղացին:

«Հայաստանի պետական արխիվում պահպանվում է մի փաստաթուղթ, որում Շառլ Ազնավուրի հայրը՝ Միշա Ազնավուրյանը, դիմում է այն ժամանակվա հայաստանյան իշխանություններին՝ հնարավորություն տալու իրենց տեղափոխվել Հայաստան: Եթե այդպես պատահեր, արդյոք Ազնավուրը կդառնա՞ր Ազնավուր: Դժվար թե»: Իսկ Հայաստան առաջին անգամ եկավ 1964 թ.:

Արտակարգ արտիստիզմից ու դինամիզմից բացի Ազնավուրին բնորոշ է դահլիճը, մթնոլորտն էլեկտրականացնելու ներքին ուժեղ էներգիան: «1982թ. Մուրադ Ռաֆայելյան դպրոցի շրջանավարտներին շնորհավորելու եկած երգչին մոտեցա ու ասացի. «Վարպետ, չե՞ք ուզում Հայաստան գալ: Եկավ 1989 թ.ևի փետրվարին, մեր համազգային աղետից՝ երկրաշարժից անմիջապես հետո: Երբ իրեն հարցրին՝ երգելո՞ւ ես: Հիմա երգելու ժամանակը չէ, ասաց: Ուղեկցում էի իրեն եւ ողջ ուղեւորության ընթացքում մի ժպիտ չտեսա դեմքին»: Շառլ Ազնավուրի ծննդյան 80ևամյակի առիթով Հայաստանի ազգային գրադարանում կազմակերպված համեստ ցերեկույթի ժամանակ պատմում էր լրագրող Վանիկ Սանթրյանը:

«Ամեն մեկն իր մեջ մի Ազնավուր ունի, եւ իր աչքերի պես տխուր են հայի աչքերը»: Արմեն Հովհաննիսյանի՝ ազնավուրյան հմայքի ազդեցության երկարատեւության մաղթանքը շարունակվեց ու շարունակվելու է... սիրո, տխրության, կարոտի ելեւէջներում...

Հայերի թիվը Վրաստանում նվազում է

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Մոտավոր հաշվարկներով Վրաստանում այսօր շուրջ 250 հազար հայ է բնակվում, այն դեպքում, երբ 1989թ. վիճակագրության տվյալներով նրանք 470 հազարն էին: «Ջավախք» բարեգործական հասարակական հիմնադրամի նախագահ Հովհաննես Այվազյանը Արմենպրեսին տեղեկացրել է, թե հայերի թվի նվազումը պետք չէ կապել ազգային խտրականության կամ ազգամիջյան բախումների հետ, որովհետեւ երեւույթի պատճառը սոցիալական է: Վրաստանում ապրող բոլոր ազգություններն էլ, ըստ նրա, այս խնդիրն ունեն:

«Հայերը ունեն սեփական կացութաձեւը, գրեթե միշտ տեղական իշխանության ներկայացուցիչը հայ Է եղել, նրանք ներքին խնդիրները լուծել են յուրովի: Այսօր կատարվող փոփոխությունները, ռուսական զորքերի հարցի շահարկումը դրական արձագանք չեն գտնում Ջավախքի հայության շրջանում, որովհետեւ տեղի ռուսական զորամասում աշխատում է շուրջ հազար հայ»,-ասել է Հ. Այվազյանը: Ծալկայում տեղի ունեցած միջադեպի առիթով նա կարծիք է հայտնել, որ 1990-ականներին այդ շրջան եկած աջարներն ու սվանները թերեւս չեն հարմարվել տեղի հայկական միջավայրին, եւ պատահածը ինքնըստինքյան վերածվել է փոքրիկ ազգամիջյան ընդհարման. «Հիմա տեղի ունեցող ազգամիջյան միջադեպերը ըստ էության եկվորների՝ հայերի հետ չհարմարվելու հետեւանք է, որովհետեւ հայերը մեծամասնություն են կազմում, հետեւաբար նրանք ունեն սեփական կացութաձեւը: Այս երեւույթների պատճառով է, որ բախումներ են տեղի ունենում»:

Նա տեղեկացրել է, որ նման հարցերի լուծման համար «Կովկասյան անվտանգության ռազմավարական ինստիտուտի» աջակցությամբ հայկական եւ վրացական համապատասխան հասարակական կազմակերպությունները հանդիպումներ են կազմակերպում:

Միջազգային

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՆՆԱՐԿՎԻ 2005 Թ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

Ցեղասպանության ուսումնասիրությանը նվիրված ամենամեծ միջազգային կազմակերպությունը՝ «Ցեղասպանության հարցերով զբաղվող գիտնականների միջազգային ասոցիացիան» (ՑԳՄԱ) տեղեկացնում է, որ երկու տարին մեկ անցկացվող իր կոնֆերանսներից հերթական՝ 6-րդը տեղի է ունենալու Ֆլորիդայի Ատլանտիկ համալսարանում (Բոկա Ռատոն, ԱՄՆ) 2005 թ. հունիսի 4-7-ը եւ քննարկելու է «90 տարի Հայոց ցեղասպանությունից եւ 60 տարի Հոլոքոսթից հետո: Շարունակվող սպառնալիքը եւ ցեղասպանության ժառանգությունը» ընդհանուր թեման:

«Մարդիկ հավատում էին, որ Հայոց ցեղասպանությունից եւ Հոլոքոսթից հետո այլեւս երբեք ցեղասպանություն տեղի չի ունենա, բայց Կամբոջայում, նախկին Հարավսլավիայում, Ռուանդայում եւ այլուր տեղի ունեցածը ապացուցեց, որ սպառնալիքը շարունակվում է: Համաշխարհային հասարակությանը բաժին ընկած ժառանգությունն այն է, որ մենք ունենք նորօրյա վերապրողներ, հանցագործներ, փրկարարներ եւ դիտորդներ», գրված է հաղորդագրության մեջ:

Ցեղասպանության ուսումնասիրությունների ինստիտուտին կից գործող ՑԳՄԱ-ն հիմնվել է 1994-ին՝ Իսրայել Չառնիի, Հելեն Ֆայնի, Ռոբերտ Մելսոնի եւ

Ռոջեր Սմիթիի ջանքերով: Մոնրեալում տեղի ունեցած երկրորդ կոնֆերանսի օրերին միաձայն որոշում է ընդունվել 1915 թ. թուրքահայերի զանգվածային կոտորածները որակել «Ցեղասպանություն՝ համաձայն ՄԱԿ-ի ընդունած բանաձեւի»: Ասոցիացիայի 200 գիտնականները լուրջ հետազոտություններ են կատարում ցեղասպանության բնույթի, պատճառների եւ հետեւանքների մասին ու երկու տարին մեկ հավաքվում կարծիքներ փոխանակելու համար:

Նրանց գործերում մեծ տեղ է հատկացվում Հայոց ցեղասպանությանը եւ Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը: Տպագրված գործերից շատերը հանդիպել են Թուրքիայի կառավարության դիմադրությանը եւ ճնշումներին, օրինակ, Հելեն Ֆայնի, Ռոբերտ Մելսոնի, Քոլին Թածի եւ ուրիշների գրքերը, որոնք, այնուամենայնիվ, տպագրվել են առանց թուրքերի պահանջած «սրբագրումների»:

Կոնֆերանսին մասնակցելու հայտ ներկայացնելու վերջին ժամկետ է նշանակված 2005 թ. հունվարի 15-ը: Մանրամասնությունների համար այցելել http://www.isg-iags.org, իսկ հայտ ներկայացնելու համար՝ feins001@umn.edu ինտերնետային սայթերը:

Հ. Ծ.

Ըստ ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ներկայացուցչի, Ադրբեջանին ցույց տրվող օգնությունը մեծացվել է

ԲԱՔՈՒ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի պետդեպարտամենտի Եվրոպայի եւ Եվրասիայի երկրներին օգնություն ցույց տալու հարցերով համակարգող Կառլոս Պասկուալը, որը Բաքու է ժամանել՝ մասնակցելու ամերիկա-ադրբեջանական համագործակցության աշխատանքային խմբի յոթերորդ նիստին, իր մամուլի ասուլիսում պատմել է Ադրբեջանին ԱՄՆ-ի ցույց տված օգնության մասին:

Նրա ասելով, թեեւ ԱՄՆ-ը այս տարի կրճատել է տարածաշրջանի երկրներին ցույց տրվող օգնության ընդհանուր ծավալը, այդուամենայնիվ Ադրբեջանին՝ որպես առաջնային երկրի, օգնությունը մեծառվել է: Այսպես, եթե 2003 ֆինանսական տարում 68 մլն դոլարի օգնություն է ցույց տրվել, ապա 2004 թվականին այդ թիվը կգերազանցի 70 մլն դոլարից: Այդ միջոցները, ըստ նրա, նախատեսված են տարբեր ծրագրերի իրականացման համար: Նա նաեւ ավելացրել է, որ ամերիկա-ադրբեջանական տնտեսական համագործակցության նիստում քննարկման թեմա է դարձել Ադրբեջանի Միջազգային բանկի մասնավորեցման հարցը: Անուշադրության չի մատնվել նաեւ նավթային եկամուտների կառավարումը:

ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ներկայացուցիչը հայտնել է, որ նիստում համաձայնություն է ձեռք բերվել աշխատանքային նոր խումբ ստեղծելու մասին: Նպատակը համագործակցության հետագա բարելավումն է, պոտենցիալ դոնորների ներգրավումը, հասարակական ներդրումների ծրագրի ստեղծումը: Արծարծվել են նաեւ առանձին գործնական հարցեր, այդ թվում՝ ոչ կառավարական կազմակերպությունների եւ ընկերությունների գրանցումը, Առեւտրի համաշխարհային կազմակերպության մեջ Ադրբեջանի մտնելու հարցերը:

Պեր Գարտոնը Ադրբեջանում էլ չի հրաժարվել իր հայտարարությունից

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - «Աշխարհում հիմնական միտումն այնպիսին է, որ անկախ պետությունների թիվը չավելանա: Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծումը պետք է այնպիսին լինի, որ Ղարաբաղը կախված չլինի եւ չկառավարվի Բաքվից: Դա միակ իրական կարգավորումն է, իսկ սահմանների բացումը կնվազեցնի տարածքային հարցերի նշանակությունը: Ես բազմիցս բերել եմ Ալանդյան կղզիների օրինակը, որտեղ բնակչության 100 տոկոսը շվեդներ են, իսկ տարածքը պատկանում է Ֆինլանդիային: Այդ իրավիճակն այսօր ընկալվում է բոլորի կողմից»,- ըստ «Արմենպրեսի»՝ Բաքվում ասել է Հարավային Կովկասի հարցերով Եվրախորհրդարանի զեկուցող Պեր Գարտոնը: «Հայաստանում ես նաեւ շատ հստակ հայտարարել եմ, որ միջազգային հանրությունը չի ճանաչում տարածքների գրավումը ռազմական ճանապարհով, եւ որ ոչ մի երկիր, այդ թվում՝ Հայաստանը, չի ճանաչի, այսպես կոչված, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը»,- ադրբեջանցի լրագրողների հարցին պատասխանել է Եվրախորհրդարանի զեկուցողը:

Հասարակական

ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՕՐԻՆԻ Է

«Գերագույն խորհուրդ» պատգամավորական ակումբը հանդես է եկել «ՀՅԴ» կուսակցության օրենքին հակասող գործունեության մասին հաղորդագրությամբ, որում մասնավորապես ասվում է Խնդրի էությունը՝

1. «ՀՅԴ» կուսակցությունը չի գրանցվել ՀՀ պետական ռեգիստրում եւ, համաձայն «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածի 3-րդ մասի պահանջների, ս.թ. ապրիլի 15-ից հետո պետք է լուծարվի այդ մարմնի կողմից;

2. Պետական ռեգիստրում գրանցված «ՀՅԴ» կուսակցության կանոնադրություն» կոչվող փաստաթուղթը որեւէ առնչություն չունի «ՀՅԴ» կուսակցության հետ, մասնավորապես՝
2.1. այն հաստատվել է «ՀՅԴ» կուսակցության գերագույն ժողով» կոչվող մարմնի կողմից,

2.2. նրանում տեղ չեն գտել «Ընդհանուր ժողով»,

«Բյուրո», «Հայաստանի գերագույն ժողով», «Հայաստանի գերագույն մարմին» եւ այլն մարմինները,
2.2. միաժամանակ, կանոնադրությունում տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող բազմաթիվ դրույթներ, մասնավորապես՝
- Գերագույն ժողովը ՀՅԴ բարձրագույն ժողովն է (8.30 կետ),
- Գերագույն մարմինը ՀՅԴ բարձրագույն մարմինն է (9.41 կետ),
- ՀՅԴ վերակազմակերպման, լուծարման որոշումը կարող է ընդունվել ՀՅԴ Գերագույն ժողովի կողմից (18.1 կետ/,
- ՀՅԴ Գերագույն մարմնի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Երեւան, Հանրապետության 30 (18.3 կետ):
3. Պետական ռեգիստրում գրանցված «ՀՅԴ» կուսակցության ծրագիրը» նույնպես հաստատվել է «ՀՅԴ» կուսակցության գերագույն ժողով» կոչվող մարմնի կողմից եւ իրենից ներկայացնում է «ՀՅԴ» կուսակցության ծրագրի (1998թ.) արեւելահայերեն տարբերակը:
4. Կանոնադրությունը եւ ծրագիրը ստորագրվել են «ՀՅԴ» կուսակցության գերագույն մարմնի ներկայացուցչի կողմից
Խնդրի կարգավորման ուղղությամբ ակումբի նախագահության կողմից ձեռնարկած միջոցներից են՝ Ս.թ. մարտի 5-ին դիմել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան (դատավոր Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ), խնդրելով պարտադրել ՀՀ պետական ռեգիստրի գործակալությանը լուծարել «ՀՅԴ» կուսակցությունը:
Դատաքննությունը դեռեւս չի սկսվել:
Ս.թ. ապրիլի 12-ին խնդրի առնչությամբ հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին, որը, խախտելով ՀՀ քր.դատ.օր. 180 եւ 181 հոդվածների պահանջները, առ այսօր որեւէ արձագանք չի տվել:
Ակումբի նախագահության մտահոգությունները՝

1. Իշխանությունները համակարգված ձեւով խոչընդոտում են կամ անուշադրության են մատնում սույն հարցով սահմանադրական կարգի վերականգնմանը:
2. ՀՀ կառավարությունը բացարձակապես չի զբաղվում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրով նախատեսված «Վերեւների», այդ թվում՝ քաղաքական կոռուպցիայի կանխարգելման խնդիրներով:
3. Հայաստանյան ոչ մի կուսակցության, առանց բացառության, չեն հետաքրքրում կամ անհանգստացնում սահմանադրական կարգի սույն խախտումները: Ավելին, օրենքից դուրս գտնվող կուսակցության հետ ոմանք համագործակցում են «կոալիցիաների» շրջանակներում, իսկ ոմանք էլ՝ քաղաքական բանակցություններ են վարում:
4. Աժ ղեկավարությունը որեւէ նախաձեռնություն չի ցուցաբերում ավանդական կուսակցությունների գործունեության օրենսդրական կարգավորման ուղղությամբ;
5. «ՀՅԴ» կուսակցության ղեկավարությունը օրենքին հակասող իր գործողություններով վարկաբեկում է երկրի ապագայով մտահոգ եւ նվիրված «ՀՅԴ» կուսակցության հազարավոր անդամների:
6. Եվ, որպես հետեւանք Հայաստանի քաղաքական համակարգն անողոք ծաղրի է ենթարկվում՝ իրականում գործում է «ՀՅԴ» մի կուսակցություն, որի բարձրագույն մարմինը, հիմնականում օտարերկրյա քաղաքացիներով համալրված ՀՅԴ բյուրոն է, իսկ «թղթի վրա», այն էլ ոչ օրինական հիմքերով, գրանցվել է «ՀՅԴ» մի այլ կուսակցություն, որի բարձրագույն մարմինը գոյություն չունեցող (անգամ՝ սեփական պաշտոնաթերթի էջերում) «ՀՅԴ գերագույն մարմինն է»:

«Գերագույն խորհուրդ» պատգամավորական ակումբի լրատվական կենտրոն 15.05.04թ.

Աղքատությունը ազգային անվտանգության հիմնախնդիր է

Աղքատության հիմնախնդիրը հետխորհրդային տարածքում ձեւավորված անկախ պետությունների սոցիալական բնույթի հիմնահարցերի մեջ առանցքայիններից է:

Իհարկե, կախված անցման շրջանում վարվող քաղաքականությունից եւ դրա իրականացման հաջողությունից, աղքատությունը տարբեր երկրներում ունենում է տարբեր դրսեւորումներ՝ ըստ խորության, սրության ու տարածվածության աստիճանի: Հայաստանում աղքատությունը արդեն 1991-1992 թթ. ստացավ տարերային ու անկառավարելի բնույթ՝ անցման շրջանում որդեգրված քաղաքականության հետեւանքով:

Տնտեսական ոլորտում Հայաստանի Կառավարությունը, որդեգրելով, այսպես կոչված, ազատական քաղաքականություն՝ անցումային շրջանում փաստորեն առաջնային համարեց տնտեսական ոլորտի բարեփոխումների իրականացումը՝ լիովին անտեսելով դրա հնարավոր անդրադարձների հավանականությունը հասարակական կյանքում:

Հետեւանքը եղավ այն, որ մեզանում ձեւավորվեց մի պետություն, որի ողջ մտահոգությունը հարուստների խավ ձեւավորելու միջոցով տնտեսության անցման կազմակերպումն է պլանայինից շուկայականի:

Սակայն խնդիրն այն է, որ շուկայական տնտեսությունը այն համակարգերում, որոնցում ձեւավորված փաստ է, գործում է հասարակական եւ քաղաքական համակարգերի հետ սերտորեն միահյուսված եւ համաձայնեցված ձեւով: Աշխարհում դեռեւս հայտնի չէ որեւէ նորմալ գործող շուկայական տնտեսություն, որը չի զուգորդվում ժողովրդավարական քաղաքական համակարգով եւ քաղաքացիական հասարակությամբ:

Այս երեք գործոնները փոխկապակցված գործոններ են, եւ եթե անցման շրջանում շեշտադրվում է սրանցից միայն մեկը, իսկ քաղաքական ու հասարակական ոլորտները համարվում են երկրորդական, ապա ազատ շուկայի ձեւավորումը անխուսափելիորեն ձախողվում է: Սա ապացուցման կարիք չունեցող փաստ է, որը

հաստատում է ազատ շուկայի ձեւավորման հարյուրամյակների փորձ ունեցող հասարակությունների պատմությունը:

Հայաստանում աղքատությունը այսօր դադարել է զուտ սոցիալական հիմնախնդիր լինելուց եւ աճել ու խորացել է այն աստիճան, որ վտանգի է ենթարկել հասարակության վերարտադրության գործընթացները ինչպես ժողովրդագրական տեսանկյունից, այնպես էլ հասարակական-քաղաքական եւ կրթամշակութային ու արժեքային:

Այն աստիճան են անկում ապրել մարդկանց առաջնային կարեւորության պահանջմունքների բավարարման կարողությունները, որ հանուն ֆիզիկական գոյատեւման նվազագույնի՝ մարդիկ պատրաստ են զիջել ոչ նյութական հարթության վրա գտնվող արժեքներն ու պահանջմունքները:

Սա հուշում է, որ ժամանակն է անհանգստանալու եւ մտածելու, որ աղքատության ծայրահեղ դրսեւորումները այնպիսի մի հասարակության մեջ, ինչպիսին հայաստանյանն է, վտանգավոր հետեւանքներ կարող են ունենալ ընդհանրապես ազգային անվտանգության համար, քանի որ անվտանգության կարեւոր գործոններից են ոչ միայն բանակը, այլեւ, առաջին հերթին, այդ երկրի եւ այնտեղ ապրող ժողովրդի զարգացման տեմպերն ու առկա ներուժը:

Երկիր շաբաթաթերթ

Մշակութային

Վարդան Այգեկցի

46.Ասորի երեցն եւ հայ երիտասարդը

Մի ասորի երեց՝ բարի ու «իմաստուն», եւ մի հայ ինչոր բանի համար կռուեցին: Երիտասարդ հայն ասաց քահանային.

-Քարով այնպէս կը խփեմ, որ երեսուներկու ատամներդ բերանդ կը լցեն:

Զարմացած քահանան այդ խօսքի վրայ եւ շտապ գնալով տուն, կնոջ ասաց.

-Երեցկին, Աստուած սիրես, մի մոմ վառիր եւ արի տես, թէ քանի ատամ կայ բերանս:

Երեցկինը լոյս վառեց եւ, յաշուելով քահանայի ատամները, ասաց.

-Երեսուներկու, ո՛չ աւել, ո՛չ պակաս:

Քահանան շտապ վերադարձաւ հայ երիտասարդի մօտ ու հարցրեց.

-Որտեղի՞ց գիտէիր իմ ատամների թիւը, ո՞վ էր քեզ ասել:

-Գիտենալով իմը, քոնն էլ իմացա,- պատասխանեց նա:

47.Հարուստ խնամախոսն ու կոյսը

Մի հարուստ մարդ իր որդու համար մարդկանց սովորութեան յամածայն խնամախոսութեան գնաց: Եւ կոյսը, որին գնացել էին ուզելու, գալիս նստում է նրա մօտ ու ասում.

-Ո՜վ հայր, օրհնեալ է քո գալուստը: Բարի վարւած կը լինես, եթէ միւս անգամ գաս, գնանք Հռոմ, այնտեղից թեքւեց Երուսաղեմ եւ ապա մէկնենք Խոր Վիրապ:

-Որդեա՛կ,- ասում է մարդը,- ես եկա, որ քեզ իմ տուն տանեմ, դու ուզում ես զրկե՞լ ինձ իմ տնից:

48.Ճգնաւորն ու իշխանը

Մի քաղցած ճգնաւոր մտաւ մի գիւղ եւ ուտելու համար հաց չճարեց: Ելնելով գիւղից, նա գտաւ տաճիկ իշխանի ձին, որ արածում էր գիւղի եզրին: Առաւ ձին, տարաւ միւս գիւղը, վաճառեց մի հացով: Հասաւ իշխանը նրա ետեւից ու հարցրեց.

-Ո՜վ ճգնաւոր, իմ մեծագին ձին ինչպէ՞ս հիմարաբար վաճառեցիր ընդամէնը մէկ հացով:

-Բարի իշխա՛ն,- պատասխանեց ճգնաւորը, շատ մի խօսիր: Այդպէս վարւեցի, որովհետեւ Քրիստոսն ասել է, թէ ձրի առէք եւ ձրի տուէք:

49.Երկու ընկերներն ու կարպետը

Երկու մարդ ճանապարհ էին գնում: Նրանք երկու դահեկան արժողութեամբ մի կարպետ գտան: Մէկը աչքածակ էր, մտածեց, ի՞նչ անի, որ կարպետը ինքը վերցնի: Ընկերոջ ասաց.

-Համաձա՞յն ես կարպետը բաժանել երկուսիս:

-Այո՛, համաձայն եմ,- պատասխանեց ընկերը:

-Տո՛ւր ինձ երկու դահեկան եւ կարպետն ա՛ռ, յաշիւը ճիշտ կը լինի:

Եւ ընկերը նախ արդար համարեց վճիռը, ապա մտածեց, զգաստացաւ ու ասաց.

-Ո՜վ եղբայր, քանի դեռ կարպետը չէինք գտել, ես քեզ ի՞նչ էի պարտք:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

-Լեռը մուկ ծնեց:

-Լեռն ինչքան էլ բարձր լինի, մի օր վրայով ճանապարհ կանցնի:

-Լռությունը միշտ չէ, որ ոսկի է:

-Խալխի վրա շուն է հաչում, մեզ վրա՝ կատու:

-Խելոքին մեկ, անխելքին հազար ու մեկ:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

-Վեճը կժի ու քարի միջեւ, կժի համար լավ չի վերջանա:

-Վերջիվերջո գայլի ձագը գայլ է դառնալու:

-Տաքդեղը փոքր է, բայց բերան է այրում:

-Տղայի տանը ոչինչ չկա, աղջկա տանը հարսանիք է:

-Ցորեն է ցույց տալիս, գարի է վաճառում:

Ժամանց

1- Ուրախ անկյուն

Բուռն վէճից յետոյ, խիստ զայրացած կինը, դիմելով ամուսնուն, ասում է.

- Այս դրութիւնը այլեւս տանել ի վիճակի չեմ: Ես գնում եմ ծնողներիս մօտ: Տուէք ինձ ճանապարհածախսը՝ 700 դրամ:

- Բայց չէ՞ որ տոմսն արժէ 350:

- Իսկ վերադարձի՞նը...

***

Ուսուցիչը աշակերտին.

- Ասա տեսնեմ, տղաս, ո՞ր կայսրը յաջորդեց Օգոստոսին:

- Սեպտեմբեր կայսրը, ուսուցիչ:

***

Տարեց, սակայն վայելչագեղ մի կին դեղատուն է մտնում եւ հարցնում.

- Ի՞նչ ունէք ճերմակ մազերի համար:

- Մեծ յարգանք, տիկին:

2- Արդյոք գիտե՞ք

Մսի համը աւելի հաճելի կը լինի, եթէ նրան տապակելուց մօտաւորապէս մէկ ժամ առաջ առատօրէն քսել մանանեխ:

***

Որպէսզի միսը հիւթալի լինի, նախքան սեղան մատուցելը պէտք է նրան մի քիչ պահել եռացող ջրով կաթսայի վրայ:

***

Ձուկ
Ծովատառեխի համը կլաւանա, եթէ նրան թրջէնք թէյի թուրմի կամ կաթի մէջ:

3.ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1-
Քարի պես է՝ քար չի,
Կռկռում է՝ կաքավ չի,
Խոտ է ուտում՝ գառ չի,
Ձու է ածում՝ հավ չի:

2-
Տանն էլ է տանը,
Դրսում էլ է տանը,
Աճպարար հո չէ՞
Այդ անպիտանը:

3-
Ման է գալիս՝ ոտքեր չունի,
Ծառ է ելնում՝ ձեռքեր չունի,
Շապիկ ունի՝ թեւքեր չունի,
Սուլում է, բայց երգել չունի:

4-
Գեղեցիկ ու շողշողուն է,
Տեսքից բոլորն էլ դողում են:

5-
Գլխարկի տեղ սղոց է,
Մորուքը կարմիր բոց է,
Լույսի ճամփան կբանա,
Իսկ մութինը կգոցե:

Պատասխան.1-Կրիա 2-Կրիա 3- Օձ 4- Օձ 5- Աքլոր

Առողջապահական

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ

Որպես հազի բուժման դեղամիջոց՝ գազարի թարմ հյութն ու կաթը հավասարաչափ խառնել իրար եւ ընդունել օրը 5-6 անգամ:

***

Քրտնելուց հետո թեթեւանալու համար անչափ օգտակար է ընդունել հապալասենու օշարակն ու մեղրը հավասարաչափ խառնած իրար:

***

Բրոնխիտային հազը բուժելու համար վերցնել 2 ճաշի գդալ թարմ կարագ, 2 ձվի դեղնուց, 1 թեյի գդալ ալյուր, 2 թեյի գդալ մեղր եւ լավ խառնելուց հետո ընդունել ուտելուց առաջ, օրը 4-5 անգամ:

***

Մրսածությունը բուժելու համար, ոչ միայն մորու մուրաբան, այլեւ նրա ցողունն ու տերեւներն էլ են օգտակար: Մորու ցուղունից ու տերեւներից պատրաստված եփուկը ընդունել բրոնխիտի ու կոկորդաբորբի ժամանակ: Ցողունն ու տերեւները եռացնել, թրմել եւ ապա ընդունել քնելուց առաջ, զգուշանալով միջանցիկ քամուց:

***

Խխման եւ վերին շնչուղիների կատարի բորբոքումը բուժելու համար որպես դեղամիջոց որպես դեղամիջոց խորհուրդ է տրվում օգտագործել դեղատու տուտղի չորացրած ու մանրացրած արմատները: 15 գ լցնել կես լիտր սառը ջրի մեջ եւ թողնել 1 օր, որպեսզի թրմվի: Այնուհետեւ ընդունել աղանդերային գդալով, օրը 4-5 անգամ: